21. Երրորդ գետ մեծ Կարնոյ աղբերավայրից և միւս ևս յեգեմականացն Գ-ԷՏ-Ի սուրբ Գիրս կոչեցեալ, և ընդ երրորդ գիմեալ դէմ յարևելս, է ԵՐԱՍԽ Հայոց, բուն և սեփականն գետ աշխարհի մերոյ՝ որ ոչ արբուցանէ զերկիր օտար. բղխէ 'ի Թիկանց հիւսիսոյ Պինկէօլ լերանց 'ի բարձու 6350'. և իջանէ ընդ հիւսիս և ընդ հուսկ դառնայ յարևելս, ընդ Շուշար և ընդ Թէքման իջանելով 'ի դաշտն Բասենոյ, յորոյ անուն և կոչի անդ. և ընդունի յահեկէ զՋուրն Հասանջալայս (Մուրդ կամ Մուրդասոր), և ապա սակաւ ինչ հիւսիսահատն խաղայ ընդ ԵԼ. ընդ մէջ լերանց Վրահայոց և Հայկական աղարուն ընդ խոխոմս ձորոց, յորոց սակս Երասխաձոր կոչէր երկիրն, և այժմ վիճակ է Կաղզուանայ, վտակս մանուանս ընդունելով մինչև 'ի սահմանս Արարատայ. ուր 'ի դաշտին Շիրակայ ընդունի յահեկէ զԱխուրեան գետ որ Արփա-լայի կոչի այժմ. և դայ 'ի հիւսիսոյ յԱրփա լճէ 'ի Վրահայոց աղբիւրավայրից. և հատանէ զդաշտն Այրարատայ արևելադէմ ընթացիւքն, որ և յանուն իւր՝ Երասխայ դաշտ կոչի, մինչև ցԱրտաշատ կամ 'ի գլուխ դաշտին Շարուրայ. և ընդունի յԱրարատեան դաշտին զՄէնդամոր որ է Շամբի ջուր, և զԲարոսի որ է Կուրէոյ ջուր, և զայլս՝ որք 'ի սառոտոյ Արագածայ լիրար անկեալ՝ գան 'ի նա, և զՀրազդան յելից նոցին (Զէնկի-չայ) և զԱլագա 'ի նորին ելից՝ որ է Գառնոյ ջուր. իսկ յայմէն զԿողբան, Զաղուան, զՋուրն Կոբայ, Պառնուտ, Ձնլասպ, Սուրմաղ: ՅԱրտաշատայ կամ 'ի Դաշտէն Շարուրայ մինչև 'ի հինն Ջուղայ՝ իջանէ Երասխ ընդ հարաւ արևելախառն, և ընդունի յահեկէ զԱրփ, Զանախաձ, զհայանուն Արբ, զՃաղրս՝ որ է Նախճաւանայ գետն, և զԵրնջակայ գետ. իսկ յայմէ զԳարբուտ, Տզմոտ, Պաւրգոս, Աթ-լայ և Կոտրոյ ջուր (Բօգուր) որ և գետ խոյի: Ի հին Ջուղայէ ցսահմանամէջս Սիւնեաց և Արցախոյ խաղայ ընդ արևելս սուղ ինչ աղեղնաբար ձեւելով զԳարասպաղ, և ընդունի յահեկէ զգետս աղբերավայրից Գարասպաղոյ՝ զԱգուլիս, Պոտոտ և Զանդոր, և յայմէ գետակս 'ի Վասպուրականն լերանց. ասա 'ի հարաւայնագոյն միջոցի ընթացիցն են և երագագոյն հոսանք Երասխայ և քարավաղքն և ջրվէժք գեղեցիկք, ահաւորք և մեծագանչք, ընդ մէջ Ուրտասատայ և Մեղրեայ. յորմէ և անդր դիւրի գետինն զառ 'ի վայր ցածնելով ընդ արևելս հիւսիսոյ, ընդ որ և դիմէ Երասխ ձեւելով զմիւս կէս Գարասպաղայ կամ զԱրցախ և զՈւտի, և ընդմիջելով զՄուղանն անապատ, ուր և խառնի ընդ Կուրայ. ընկալեալ յահեկէն զգետսն Ուրդան կամ զԲուրիոնաչ, և զՀատրոս, յորոյ յելից անցանէ ընդ մեծաւ կամրջաւն խիւտաֆերիին, և ապա այլս մանուանս զԳուլաս, Քէնթիլն, և այլն. և յայմէ հղորագոյնս յԱրարատեան աշխարհէ, զԱլանան, Գըրտոս, զՀզորն Տերիոն-Բոտ, զԳորոս-լայ և զայլս: Յետ միանալոյ ընդ Կուրայ՝ սակաւ ինչ ընդ հիւսիս և ընդ արևելս խոտորեալ, ապա ընդ հարաւ իջանէ արևելախառն 'ի ծոցն Կասպից՝ յերկուս առաջս բաժանեալ, մի յելից հարաւոյ Սալիանայ՝ միաբերան, և միւս 'ի մէջ հարաւոյ բազմաւուր տրոհմամբ. և լինին ամենայն ընթացք նորա երկայնեալ վասն դարձուածոյն՝ իբրև 617 մղոն ցխառնուրդս Կուրայ, և 95 անտի ցծով:

22. Երկրորդ աղբերավայրք են բարձրաւանդակն Վրահայոց՝ ջրբաժին լերամբք Զըլարայ, և Ղարսայ և Սօղանլուի յելից հիւսիսոյ Կարնոյ. 'ի յետնոց լերանցս բղխէ Մօր-Մեծ (Գետն Ղարսայ) և ընկալեալ զՄէնդ գետ (Զըլարը) և զայլ վտակս յորվս յահեկէ որ է 'ի մոտից՝ խառնի յԱխուրեանն (20): Յարևմտից ջրբաժնիս բղխէ երրորդն մեծութեամբ 'ի գետս աղբերացեալս 'ի Հայոց ԿՈՒՐ սեփականն Վրաց, 'ի Կող գաւառի մերոյս Գուգարաց, որ այժմ Կեօլէ կոչի, յոսատց լերանց Ղարսայ և Գաշնուի (5) 'ի բազում աղբերաց, որք միանան յԱրատահան, 'ի հիւսիսի, և յանուն նորա նոսա կոչին, և դիմեն յարևելս ցՔարցախս լեռ (18), ուր յայմէ խառնի գետակն Սուրուանայ. և անդ սկսանի կոչումն Կուր գետոյ և ընթացք նորա ընդ հիւսիս. Վիրք Մթիսուրի (Գետ-Կուրայ) կոչեն զգետս, և արևելեալք Քուր կամ Քիս. որ իջանէ 'ի հիւսիս ցԱխալցխէ և ընդունի յահեկէ զգետ նորին զեկեալն յԱճարայ, և յայմէն զՓառան ապա դառնայ յարևելս հիւսիսախառն ցՔարելի աւան, և անտի հարաւախառն յարևելս ցՄծխեթա, յայմէ և յահեկէ ընդունելով գետակս արտաքոյ Հայոց. 'ի Մծխիթայ իջանէ ընդ հարաւ 'ի Տփղիս, և անցեալ ընդ այն խաղայ 'ի հարաւ արևելախառն մինչև 'ի Խուշանի և 'ի Կարմիրն անուանեալ կամուրջ մեծ (123), և անդ ընդունի յայմէն զՀզոր օժանդակն զԱվէր 'ի հիւսիսոյ և զԲոյտ որ և Խրամ 'ի հարաւոյ. սա բղխէ 'ի լերանց Թաւելայ (6) և ընդունի և ինքն 'ի հարաւոյ օժանդակս զԱրբիաթէյս, զՄաղավէր որ և Փոր Խրամ, հանգերձ Բաղնեայ գետով (Բոլոտաւերի), զՇուլավերի, և զՀզորն և զկարկաջոտ Պուլուր որ և Զորգետ կոչի ևս և Տեղեան և Բերդաձ, որ և իջանէ 'ի Բամբակի լերանցն (6), յինքն առեալ զՀանկեսար-սու և զՃիլա, որք յԱպոց լերանց բղխեն: Յետ այնորիկ խաղայ Կուր ընդ արևելս հարաւախառն ընդ մէջ Հայոց, Վրաց և Աղուանից ցԳանձակ. յայմէն ընդունելով ըզգետս արևելեան բարձրաւանդակին Սեւանայ, զԻնձէ, Աղստև, Հասան, Տարոն, Մրդոն, Ջնամոմ, Ճիներ, Շնմոր, Խուլարա և կենձ. իսկ յահեկէ զերկոսին հզօրագոյնս յօժանդակաց իւրոց զիջեալն 'ի Կովկասայ, զԻոտ կամ Եոտ և զԱլազան. ասոտ և 'ի վայր ընդ հարաւ իջանէ Կուր ընդունելով յայմէն զԱրցախական և զՈւտիոյ գետս, զԿուրակ և զԿուրան, զԹարեռս և զԳարգար, և յահեկէ զգետս Շիրուանայ զեկս Կովկասայ, զԵլիսիան, Թուրեան, Կեօդ, և այլն. և ապա դառնայ ընդ արևելս հարաւախառն և խառնի ընդ Երասխ, ընթացեալ մինչեւ ցայս վայր մղոնս իբրև 630, առաւելեալ քան զզուգակից իւր Երասխ՝ մանգաղաձեւ գալարմամբն և մանուածաւալ պտուտիւք, այլ ընդ վեց ասպիճան երկայնութեան միայն ձգին ընթացք նորա, իսկ Երասխայն ընդ եօթն, զի սա ուղղագոյն ընթանայ և գրեաթէ միջակտուր առնէ զՀայաստան, սուղ ինչ անցեալ զ39° լայնութեան ասոտ և անտի, իսկ Կուր ընդ մէջ երկուցն խաղայ